




ՀԱՅ ԶԵՌԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՆՎԻՐՅԱԼԸ
ԵՎ ԵՐԱՆՏԱՎՈՐԸ
(Բազմալսատակ հայագետ դոկտ., պրոֆ. Ասատուր Մնացականյանի պաշտոն հիշատակին)

Շուրջ մեկ և կես տարում հայրենի հայագիտությունը իրարահաջորդ ծանր կորուստներ կրեց: Մահացան բազմաթիվ անվանի հայագետներ: Իսկ վերջերս այս տարվա հունիսի 27-ին հայագիտությունը կորցրեց իր նվիրյալներից բազմալսատակ գիտնական դոկտ., պրոֆ. Ասատուր Մնացականյանին, որը փակեց իր աչքերը երկարատև ու ծանր հիվանդությունից հետո:

Ասատուր Շնավոնի Մնացականյանը ծնվել է 1912 թ. հուլիսի 11-ին Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղում, միջնակարգ ուսումը ստացել է Վաղարշապատի դպրոցում (նախկինում Գևորգյան ձեմարանի ջենք), իսկ բարձրագույն ուսումը՝ Թբիլիսիում, ուր 1939 թ. ավարտել է տեղի գյուղատնտեսական ինստիտուտը:

Սկզբում Մնացականյանը ի հայտ է եկել իբրև բանաստեղծ, օգտագործելով Ասատուր Շենս գրական կեղծանունը: Նա գրական պարբերականներում և առանձին գրքույկներով լույս է ընծայել բանաստեղծություններ, որոնք գրված են հայրենասիրությամբ, լավատեսությամբ և ջերմությամբ: Նրա գրչին են պատկանում «Հանցանք» (1939), «Պատերազմ և հայրենիք» (1942) և «Բանաստեղծություններ» (1947) ժողովածուները:

Աս. Մնացականյանը 1940 թ. ընդունվել է ՍՍՀՄ Գրողների միության անդամ: Հիշյալ թվականից էլ նոր կյանք է սկսում նրա համար: Նրա ունեցած բնածին տաղանդը և հակումները դեպի հայագիտությունը Մնացականյանին առաջնորդեցին Մատենադարանի հայերեն ձեռագիր գանձերի կախարդական աշխարհը, որին ի տես նա համակցեց մեծ ու անքակտելի սիրով և ուխտեց իր



կյանքը անմնացորդ կերպով նվիրաբերել հայ ձեռագրագիտությանը:

Վրա հասնող երկրորդ համաշխարհային պատերազմը և հիտլերյան Գերմանիայի հարձակումը Սովետական Միության վրա, ընդհատեց նաև Մնացականյանի սկսած ձեռագիր գանձերի վննման աշխատանքները: Իբրև սպա Սովետական բանակի, Աս. Մնացա-

կանյանը ստիպվեց գրիչը փոխարինել վենջով և անցավ մարտական հսկա ուղի: Նա 1942—1945 թթ. Կերչի ահեղ կոֆլներից հետո մասնակցեց Բուդապեշտի ապստամբության համար մղված մարտերին, հասնելով մինչև Վիեննայի պատերի տակ: Նա պարզևատրվելով շքանշաններով և մեդալներով դարձավ վերադարձավ Մատենադարան ու բացառիկ ջանասիրությամբ կրկին մխրձվեց ձեռագրական աշխարհը և ի հայտ բերեց մեր միջնադարյան բանաստեղծությունից բազում գրական գանձեր: Այս առումով Մազականյանի համար լավագույն դպրոց հանդիսացան 1940—1941 թթ. Մատենադարանում ձեռագրերի քարտագրման և գեղարվեստական նյութերի ցուցակների կազմման իր աշխատանքները: Նրա առաջին խոշոր նվաճումը հանդիսացավ «Հայկական ժողովրդական երգեր» հատորը, որ նա լույս ընծայեց 1956 թ. և ձոնեց մեծանուն հայագետ Մանուկ Աբեղյանի հիշատակին: Այդ երգերը մինչ այդ էիմանականում գտնվում էին ձեռագիր վիճակում: Իր այս պատկառելի հատորով, Աս. Մազականյանը առաջինն էր, որ հայ ժողովրդական երգերը ի մի հավաքեց, գրեց հանգամանալից ուսումնասիրություն, կատարելով յուրաքանչյուր երգի համար առանձին բանասիրական հետազոտություն և ճոխացրեց այդ բոլորը օժանդակ նյութերով և բազում հմտալից ծանոթագրություններով: Գիրքը ունի օգտագործված աղբյուրների ցուցակ բառարան և ցանկեր: Մազականյանի այս մեծարժեք գործը հիմնականում խարըսիված է Մաշտոցյան Մատենադարանի շուրջ 140 ձեռագրերի, ինչպես նաև տպագիր աղբյուրների վրա: Այդ հատորը հեղինակի երկար տարիների համբերատար պրպտումների հանրագումարն է: Ինչպես իր հաջորդ բոլոր գործերում, այստեղ ևս պահպանվում է Մազականյանի բացառիկ բարեխղճությունը: Նա ամեն անգամ նշել է տողատակերին տվյալ երգի վերաբերյալ տարբեր ձեռագրերի բոլոր տարբերակները և որոնք աղբյուրագիտական տեսակետից կազմված են մեծ հնոտությամբ:

Ակադեմիկոս Լ. Ս. Խաչիկյանը Մազականյանի վերոհիշյալ գործի մասին իր գրած գրախոսությունում նշել է. «(Այս) ժողովածուի միջոցով առաջին անգամ գիտական շրջանառության մեջ մտած բարձր մակարդակի ստեղծագործություններով պզալի չափով հարստանում է միջնադարյան հայ գրականության հուշարձանների քանակը: Այն անտարակույս իր պատվավոր տեղը պետք է զրավի Մ. Աբեղյանի «Պատանական ժողովրդական տաղեր» և «Ժողովրդական խաղիկներ» սովոր ժողովածուների կողքին,

որպես հայ բազմադարյան գրականության անգլանատեղի սկզբնաղբյուր» («Պատանական սիրական հանդես», 1959, № 2—3 (5—6), էջ 363—368): Աս. Մազականյանի այս կարևոր աշխատությունն էլ իբրև ավարտաձևո հեղինակին արժանացրեց բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին (1958 թ.):

Սակայն Մազականյանի կողմից միջնադարյան գրականությանը նվիրված գործերի թիվը շատ ավելի մեծ է և արժեքավոր: Առանձին գրքերով նա լույս է ընծայել «Նաղաշ Հովասթան, Բանաստեղծություններ» (1951 թ. բանասեր Շուշանիկ Նավարյանի հետ) հատորը: Քանի որ հեղինակի ինքնաձեռագիրը մեկ չի հասել, օգտագործվել են շուրջ 60 ձեռագրեր, հիմնականում Մաշտոցյան Մատենադարանից: Ստեղծագործությունների կարևոր մեկ մասը առաջին անգամ է, որ հրատարակվել է և այն ևս կապված է մեծ բարեխղճությամբ, գիտահամեմատական բնագրերով և տարբերակներով հանդերձ: Գիրքն ունի առաջաբան, բնագրերի բաժին, ծանոթագրությունների բաժին, օգտագործված ձեռագրերի ցուցակ, բառարան և ցանկեր: Շուտով 1954 թ. նույն կապուղները Գրական թանգարանի չմշակված ֆոնդում հայտնաբերեցին և հրատարակեցին Նաղաշ Հովասթանի վեց անտիպ տաղեր ևս, որոնք դուրս էին մնացել բանաստեղծի հիշյալ տաղագրքից («Տեղեկագիր», Գիտությունների ակադեմիայի հասարակական բաժանմունքի, 1954, № 7, էջ 71—80):

1958 թ. Աս. Մազականյանը դարձավ բանասեր Շուշանիկ Նավարյանի հետ լույս ընծայեց Պաղտասար դպիրի «Տաղիկներ սիրոյ և կարօտանաց» գիրքը, որն ունի նախաբան, բնագրեր, հավելվածներ, ծանոթագրություններ և ցանկեր: Բնագրերի կազմման համար օգտագործվել են 64 ձեռագրեր Մաշտոցյան Մատենադարանից, ինչպես նաև տպագիր բոլոր հրատարակությունները: Ընդգրկված են նաև բանաստեղծի անտիպ գործերից, ինչպես նաև նրա անտիպ տապանագիրը: Սույն գրքով առաջին անգամն է, որ Պաղտասար դպիրի կյանքն ու գործունեությունը հատուկ ուսումնասիրության նյութ են դարձել:

Աս. Մազականյանի կողմից հայ միջնադարյան գրականությունը պեղելու և մեր կուրած գանձերը շրջանառության մեջ դնելու գծով կատարված կարևորագույն նվաճումներից մեկն է նաև «Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ» ծավալուն հատորը (1972): Այդ գործը դեռևս 1946 թ. պատրաստ էր Մատենադարանում և սպանոր նյութերով վերանայվել ու ճոխացվել էր:

Մինչև Մնացականյանի այս երկը, Գրիգոր Տղան, իբրև բանաստեղծ և մտածող, գրեթե մնացել էր անտեսված, քանի որ նախ չէին հայտնաբերված և հրատարակված նրա բոլոր ստեղծագործությունները, իսկ մյուս կողմից անգամ տպագրվածները անուշադրության էին մատնվել: Այս գործի համար ևս օգտագործվել են Մատենադարանի 36 ձեռագրեր, ինչպես նաև արտասահմանյան գրչագրեր: Գր. Տղայի մի շարք ընդօրինակություններով հայտնի դարձած գործերը հրատարակվել են համեմատական և ճշգրտված բնագրերով ու տարընթերցումների տուրատակային նշումներով: Ուսումնասիրական մասը առանձին գիտական արժեք է ներկայացնում և միջնադարյան հայ գրականության պատմության մեջ ամենահիմնադրից հետազոտությունն է՝ նվիրված Գրիգոր Տղայի կյանքին ու ստեղծագործությանը:

Աս. Մնացականյանի հայ գրական գոհարներին նվիրված հեթոսական մեծածավալ ու արժեքավոր գործը «Հայ միջնադարյան հանելուկներ (5—18 դդ.)» խորագրով հատորն է (1980): Երկար տարիների համառ ու տքնաշան որոնումների արդյունքը եղող սույն գործը ևս գալիս է ամփոփելու միջնադարի ծնունդը հանդիսացող մեր անտեսված հանելուկները: Այստեղ ի մի են բերված 40-ից ավելի հայտնի և անհայտ հայ միջնադարյան հեղինակների գրած հանելուկները: Կան հանելուկներ հեղինակված Դավիթ Քերթողի, Ասանիա Շիրակացու, Հովհաննես Ծործորեցու, Գրիգոր Նյաթեցու և այլոց կողմից: Կարևոր է նշել, որ շնորհիվ Մնացականյանի կողմից կատարված նորանոր հայտնաբերումների, միայն Ներսես Շնորհալույս պատկանող հանելուկների թիվը անցնում է 300-ից: Բացի Մաշտոցյան Մատենադարանի 56 ձեռագրերից, օգտագործվել են նաև Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի, Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանության մատենադարանի ձեռագրերը, ինչպես նաև տպագիր գրականություն: Գիրքն ունի հմտալից ներածություն: Կազմողը մեծ աջխատանք է կատարել պատրոշելու համար մեզ հասած հանելուկները միաձուլումներից և շփոթություններից: Բերված բնագրերը ունեն համապատասխան տարընթերցվածներ և սուռչին անգամն է, որ լույս են տեսնում գիտական տեսքով: Վերջում գիրքն ունի նաև բառարան:

Այս առումով հիշատակության արժանի է նրա կարևոր ներդրումը հայ ժողովրդի պատմության ակադեմիական բազմահատորյակի ստեղծման գործում: Հայկ. ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի կողմից հրատարակված

«Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի երրորդ հատորում (1976) Աս. Մնացականյանի գրչին են պատկանում գրքի 22-րդ և 51-րդ գլուխների գեղարվեստական գրականության ընդարձակ բաժինները (345—365 և 851—879 էջեր): Բազմահատորյակի չորրորդ հատորում (1972 թ.) դարձյալ ինքն է, որ ուրվագծել է հայ միջնադարյան գրականության պատմությունը 14—18 դդ. սկսած Առաքել Սյունեցուց մինչև Սայաթ-Նովա (510—568 էջեր): Իր այս շարադրանքում հեղինակը ներդրել է այն նորը, որ ևս երկար տարիների ընթացքում հայտնաբերել է և կամ եզրահանգել է հայ միջնադարյան գրականության դեմքերի կյանքի ու գործունեության, ինչպես նաև նրանց ստեղծագործությունների վերաբերյալ: Շատ սեղմ հրատարակված, սակայն ավելի քան 100 տպագիր մեծադիր էջեր բովանդակող այս գործը ինքնին հայ միջնադարյան գրականության առանձին մի պատմություն է:

Հայ միջնադարյան գրականությանը նվիրած իր մենագրություններից բացի, մեծ թիվ և արժեք են ներկայացնում նրա հոդվածները, որոնք մնայուն նշանակություն ունեն մեր միջնադարյան գրական ժառանգությունը հարստացնելու և լուսաբանելու գործում: Տեղի սղության պատճառով բավարարվենք նրանցից նշելով միայն մեկ քանին. «Գիտություններ հին տաղարաններում կատարված մի շարք աղավաղումների մասին (Մատենադարան. Գիտական աշխատությունների ժողովածու, 1941 № 1), «Ֆրիկի նորահայտ մի բանաստեղծությունը» («Տեղեկագիր», Հայկ. ՍՍՀ ԳԱ հաս. բաժանմունքի, 1946, № 2—3), «Աստիպ էջեր (Սայաթ-Նովա, Շամշի Մելքոն և Անանուն երգիչ)» («Տեղեկագիր», 1947, № 5—9), «Մոսկվան միջնադարյան հայկական մի պոետում» («Տեղեկագիր», 1948, № 3), «17րդ դարի երգիչ Քոսա երեցը և նրա երգերը» («Բանբեր Մատենադարանի», 1956, № 3), «Հայրենների և Նահապետ Քուչակի մասին» («Պատմաբանասիրական հանդես», 1958, № 2), «Միջնադարյան հայրենասիրական մի նորահայտ պոետ. Տաղ Տեր Ստեփանոսին Սինեաց եպիսկոպոսին» (Բանբեր Մատենադարանի», 1967, № 8), «Անիի բանաստեղծ Վարդան Անեցին և նրա ներբողը» («Բանբեր Մատենադարանի», 1964, № 7), «Սայաթ-Նովա, բանասիրական ճշգրտումներ» (ՊԲՀ, 1963, № 3), «18-րդ դարի բանաստեղծուհի Հոռոմսիմի Ազուլեցին և նրա հայրենասիրական ողբը», «19-րդ դարի առաջին կեսի բանաստեղծուհի Եղիսաբեթ Բարսեղովը և իր սիրո երգը» («Սովետական գրականություն և արվեստ», 1951, № 5), «Մի

հազվագյուտ կին երգարանի մասին» (ՊԲՀ, 1975, № 3), «Իստորություններ «Վարդգես մանկան» վիպական հասվածի վերաբերյալ» (ՊԲՀ, 1975, № 3), «Գովանք թռչնոց» տաղաչարքը, նրա հեղինակը և ժամանակը» («Բանբեր Մատենադարանի», 1980, № 13) և այլն, և այլն:

Մոտ մի քսուասուսակ Աս. Մնացականյանը իր կատարած անխոնջ պրպտումների ընթացքում հարուստ ատաղձներ է քաղել նաև հայ արվեստի բոլորովին անտեսված մի բնագավառի՝ հայկական վարդարվեստի վերաբերյալ: Հայկական ձեռագրերի աշխարհը հետախույզելու իր բացառիկ նվիրման ընթացքում է, որ ծնվեց «Հայկական վարդարվեստ. հիմնական մոտիվների ծագումն ու գաղափարական բովանդակությունը» կոթողային սովարածավալ գործը (1955): Իր այդ հսկա հատորը Աս. Մնացականյանը խարըսխել էր Մատենադարանի շուրջ 300 ձեռագրերի, հարուստ տպագիր գրականության, պարբերական մամուլի և այլ նյութերի վրա: Գրքում օգտագործված շուրջ 1150 նկարների հիմնական մասը հրատարակվել է առաջին անգամ: Սակայն հեղինակը վարդարվեստի վերաբերյալ համեմատական փոզահեռներ անցկացնելու համար, բացի հայկական նյութերից, օգտագործել է նաև բաբելական, ասորեստանյան, եգիպտական, իտալական, միտանիական, ուրարտական, պարսկական, հունական, չինական, հնդկական, սկյութական, փյունիկյան և այլ տասնյակ ժողովուրդների վարդարվեստի նմուշներ: Իբրև խոպան մնացած հարցերի հետապոտող Աս. Մնացականյանը ըստ աստշաձի բարձրացրել է գիտականորեն լուսաբանել է հայ արվեստի հիմնական մոտիվների ծագումն ու գաղափարական բովանդակությունը:

Անհրաձեշտ է միաձամանակ նշել նաև, որ հայկական վարդարվեստի հիմնական մոտիվների ծագման և գաղափարական բովանդակության հարցերին նվիրված սույն ուսումնասիրությունը բանալի է տալիս նաև այլ ժողովուրդների վարդարվեստների համապատասխան հարցերի լուծման համար: Հայկական վարդարվեստին նվիրված սույն մեծ աշխատանքը իր ներկայացրած մեծ հետաքրքրության և արժեքի համար ջերմորեն ընդունվեց մասնագետների կողմից ինչպես Հայաստանում և ՍՍՀՄ-ում, այնպես էլ արտասահմանում: «Հայկական վարդարվեստ» աշխատությունը նրա հեղինակին արժանացրեց պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին (1964): 1973 թ. նա ստացավ նաև պրոֆեսորի կոչում:

Հետագայում ևս Աս. Մնացականյանը անըրադարձել է իր համար շատ սիրելի հայ

արվեստի վանալան հարցերի լուսաբանանը: Նրա գրչին են պատկանում. «Վիշապ» բարակորոզները և վիշապամարտի դիցաբանության մասին» («Տեղեկագիր», 1952, № 5), «Ինչ է ասում Արմավիրյան կրճազարվը» («Տեղեկագիր», 1977, № 3), «Գեղագրոտի Ալիձ Տարսունացի» («Տեղեկագիր», 1975, № 10), «Իիցաբանական եղջերուն միջնադարյան հայ արվեստում» («Բանբեր Մատենադարանի», 1977, № 12), «Վերստին Մուսասիրի տաձարի ձակտոնի խորհրդանշանի մասին» (ՊԲՀ, 1977, № 4) և այլն, և այլն:

Մնացականյանը կարևոր գործ է կատարել նաև հայ ժողովրդի պատմության մի շարք կնձոտ հարցերը լուսաբանելու ուղղությամբ: Այս բնագավառին նվիրված իր մի շարք հետապոտություններում առաջնակարգ տեղ է գրավում Աս. Մնացականյանի «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ» (1966) մենագրությունը: Հեղինակը իր այս գործում հիմնվելով հունա-հռոմեական, հայկական, վրացական, հուշարձանների ու ապագագրական նյութերի վրա, ապացուցել է, որ Աղվանքը և աղվանները տարածված են եղել ոչ թե Կուր գետի երկու սփերին և Կովկասյան լեռներից մինչև Սևան ու Արաքս, այլ միայն և միայն Կուր գետի ձախ ափին, այսինքն՝ Կովկասյան լեռներից մինչև Կուր գետը: Հեղինակը միաձամանակ ցույց տվեց, որ Աղվանքի երկու ըմբռնում կա: Բուն Աղվանքը՝ մինչև 387 և Նոր Աղվանքը՝ 387 թ. հետո, որը և երկու անգամ ավելի մեծ է, աշխարհագրական և թե՛ ցեղագրական առումով, քան առաջինը, ապինքն՝ Բուն Աղվանքը, քանի որ պարսիկները 387 թ. ընկձելու համար Հայաստանը նրանից անջատեցին նրա կյուսիսային երկու նահանգները՝ Ուտիքը և Արցախը, և միացնելով Աղվանքի հետ՝ ստեղծեցին Նոր Աղվանքը պարսիկ արշակունիների տիրապետության տակ: Այսպիսով, Աղվանքի կեսը 387 թ. հետո ուրիշ բան չէր, եթե ոչ արտմական Հայաստանի մասը: Այս գրքի նշանակությունը ևս շատ մեծ եղավ և ինչպես նկատել է բազմապատասխան հայագետ և մատենագետ Հ. Ս. Անասյանը սույն գրքին նվիրած իր ուսումնասիրական բնույթի ընդարձակ գրախոսությունում. «Ա. Ե. Մնացականյանի մենագրության շնորհիվ այսօր բացահայտվում է այսպես կոչված Հայկական Աղվանքի կամ Հայոց Արևելից Կողմանցի իսկական պատմությունը իր ընդհանուր գծերով և ներկայանում հարագիտությանը որպես հատուկ հետապոտության կարոտ բնագավառ»: Այսպիսով, 387 թ. հետո «Բուն Աղվանքին կցված հայկական գավառների նը-

ման, աղվանական կոչման տակ է մտել նաև այդ գավառների ամբողջ պատմությունն ու մշակույթը»:

Այս գրքի ունեցած մեծ կարևորությունն էր պատճառը, որ անհրաժեշտ նկատվեց այն լույս ընծայելու նաև ռուսերեն լեզվով (1969 թ.):

«Այ ժողովրդի պատմության հետազոտման ասպարեզում Աս. Մնացականյանը ունի նաև այլ կարևոր ներդրումներ, որոնց նշանակության և արժեքի մասին խոսելու հնարավորություն չունենք: Նման բնույթի նրա կարևոր ուսումնասիրություններից են. «Թուրքական շարժման մի քանի գլխավոր հարցերի մասին» («Տեղեկագիր», 1954, № 3), «18րդ դարում գրված հայ-ռուսական դաշնագրային երկու նախագծերի գնահատման հարցի շուրջը» («Բանբեր Մատենադարանի», 1958, № 4) և այլն:

Աս. Մնացականյանի վերոհիշյալ նախասիրությունների մեջ եղել է, սակայն, մի բնագավառ, որը շարունակաբար իր բովանդակ կյանքի ընթացքում տիրական է եղել նրա մեջ: Այդ հայ ձեռագրագիտության ասպարեզն էր: Նրա կյանքի իմաստը մինչև իր վերջին շունչը շարունակում էր մնալ հայերեն ձեռագրերի լիակատար գիտական ձեռագրագրության ստեղծումը: Քառորդարյա նրա մաքառումները Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրագրության ստեղծման ուղղությամբ անվերապահորեն վկայում են, որ նա հայ ձեռագրական աշխարհի բացառիկ նվիրյալն էր բառիս բուն իմաստով:

Ամբողջ 25 տարիներ շարունակ Աս. Մնացականյանը այս գործի հաջողության համար ներդրեց իր ուժն ու եռանդը և տաղանդը: Ամբարելով հայ և օտար ձեռագրագրողների արդեն իսկ դասական դարձած փորձը, Աս. Մնացականյանը ոգի ի բռնի աշխատում էր եղած ավանդույթներին Կոստանյայի նոր հիմքեր ստեղծել արդի պայմաններից համապատասխանող հայերեն ձեռագրագրության ստեղծելու համար: Երկար ու համառ աշխատանքի շնորհիվ ձեռագրերի նկարագրության համար նա հատուկ բառարան էր կազմել և բառապաշար մշակել: Նա ամենայն բարեխղճությամբ կանգ էր առնում ձեռագրերի կազմի, մանրանկարչության, գարդարվեստի, թղթի տեսակի, լուսադրոշմի, վրչության, հնագրության և բազում այլ հարցերի վրա: Աս. Մնացականյանը անդրովիտորեն պաշտպանում էր տալ ձեռագրի ամբողջական բովանդակությունը առաջնորդվելով ոչ մի նյութ դուրս չթողնելու սկզբունքից, ինչպես նաև հիշատակարան-հիշատակագրությունները սկզբից մինչև վերջ ժամանակագրականորեն իբրև լավագույն պատկեր ձե-

ռագրի կյանքին ու կրած փորձություններին: Իբրև մեկը, որ շատ մոտիկից համախորհուրդ պաշտպանել է Աս. Մնացականյանի տեսակետները, հիացմունքով էի հետևում նրա անհողողող կամքի ուժին ու եռանդին, որով պաշտպանում էր ընդարձակ գիտական ձեռագրաց մայր ցուցակ ստեղծելու սկզբունքները, որոնց իրագործման դեպքում է՛լ ավելի հարստանալու էր հայ մշակույթի փառքը, ու հապարումի արհավիրքներից փրկված մեր ձեռագրական գանձերը ի վերջո հանգամանալից ուսումնասիրության առարկա էին դառնալու: Այդպիսով վերջապես արժեքավորվելու էր այնքան անդառնալի կորուստներ կրած մեր ձեռագրական ազգային գանձարանը:

Սակայն դժբախտաբար պանսպան հանգամանքներ հնարավորություն չտվեցին. որպեսզի ծրագրված հսկա աշխատանքը այդ ժամանակվանից սկսվի մեծ թափով: Այդ ժամանակ իբրև անհրաժեշտություն (որի առաջարկողներից մեկը նաև այս տողերը ստորագրողն էր, ընդարձակին Կոստանյանը իբրև գույքամատյան) լույս տեսան երկու հատորով «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի» հատոր Ա (1965) և հատոր Բ (1970) խմբագրությամբ և ղեկավարությամբ դարձյալ Աս. Մնացականյանի (Լ. Ս. Խաչիկյանի հետ) և կազմված Օն. Եգանյանի, Ա. Չեյթունյանի և Փ. Անթափյանի (ներածությունը և ցանկերը Օն. Եգանյանի): Նրանք ընդգրկում էին 86 և 88 հեղինակալի մամուլ և բովանդակում էին Մաշտոցյան Մատենադարանի 10,408 ձեռագրերի շատ համառոտ նկարագրությունը:

Վերջապես սրանից տարիներ առաջ վերսկսվեցին Մատենադարանի ընդարձակ գիտական մայր ցուցակ կազմելու աշխատանքները, որոնք ղեկավարվեցին ու խմբագրվեցին Աս. Մնացականյանի անդուլ ճիգերի և հապարումի Կոստանյանիների գնով: Այսօր արդեն «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի» Ա հատորը՝ կազմված ձեռագրագետներ Օն. Եգանյանի, Ա. Չեյթունյանի և Փ. Անթափյանի կողմից ու ղեկավարված և խմբագրված Աս. Մնացականյանի կողմից, գտնվում է տպարանում: Այն ընդգրկում է տպագրական 60 մամուլ ծավալ (1551 էջ մեքենագիր), ունի Աս. Մնացականյանի կողմից գրված ընդարձակ հմտալից առաջաբան (շուրջ 120 էջ մեքենագիր) և 300 ձեռագրի մանրամասն նկարագրություն: Անհրաժեշտ է նշել նաև, որ տպագրության համար պատրաստ են նաև Բ., Գ., Դ. և Ե. հատորները, բոլորն էլ ղեկավարված Աս. Մնացականյանի կողմից և օրինակելի են լինելու նաև հետագա հատորների համար: Այժմ միայն դառնորեն կարելի

է ափսոսալ այն բանի համար, որ Մնացականյանը չի տեսնելու Մատենադարանի ձեռագրերի հիմնադիր, ինչպես նաև սկզբնական հատորների լույս ընծայումը և ոտոնց իրականացման համար անապառ ուժ և եռանդ էր ներդրել ու նրանց հրատարակումը դարձել էր իր կյանքի իմաստը:

Մնացականյանը իրեն հատուկ մեծ եռանդով երկար տարիներ շարունակ անդադրում կերպով վբաղվում էր նաև հայ միջնադարյան քնարերգության գլուխգործոցները հանդիսացող **Հայրենների** հայտնաբերման, նրանց գիտահամեմատական վեագրերի կազմման և վերջապես նրանց վերաբերյալ ծանրակշիռ ուսումնասիրություն գրելու աշխատանքներով: Նա իր հիվանդությունից միայն մի քանի օր առաջ ավարտեց այդ գործը և հանձնեց տպագրության: Եուրջ 60 մասով ընդգրկող այդ սուվարածավալ աշխատանքը ամենաճոխն է և ամենակատարյալը իրեն նախորդած հայրենների հրապարակումներից: Մնացականյանը իր կարապի այս երգով հայ միջնադարյան գրականության անդաստանը կրկին հարստացրեց հայագիտական մեծարժեք մի գործով, որի պակասը վաղուց էր վզացվում:

Իբրև սպա, Աս. Մնացականյանը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին և Կերչի կռիվներին, այլոց հետ գերվելով տեղափոխվել է Ռումինիայի Տիմիշոարա քաղաքի գերիների ճամբարը: Ռումինահայ զաղոթը, հակառակ տիրող ծանր պայմաններին, եղբայրական օգնություն է կազմակերպել հայ ռազմագերիներին, ուր որ էլ գտնվել են նորանք: Մնացականյանի հետ են եղել բազմավաստակ հայագետ Հակոբ Անասյանը, հայտնի գրող Խաժակ Գյուլնապարյանը և շատեր: Մնացականյանը միշտ էլ երախտագիտությամբ էր հիշում ռումինահայերի եղբայրական օգնության մասին և իրեն համարում էր ինչ-որ չափով նաև ռումինահայ: Այդ դժվարին օրերին էր, որ նա սերտ կապեր էր մշակել ռումինահայ թեմի առաջնորդական տեղապահ Վազգեն Նորրնձա վարդապետի հետ (ապա Կաթողիկոս Ամենայն Հայոց), և այդ կապերը շարունակվեցին նաև Հայաստանում: Աս. Մնացականյանի հետ մեր առաջին ծանոթությունը տեղի ունեցավ ուղիղ 40 տարիներ առաջ 1943 թ. Բուխարեստի «Հայ մշակույթի տան» թանգարանային բաժնում: Ավելի ուշ, մասնակցելով Աս. Մնացականյանի ղեկավարած Մատենադարանի ձեռագրերի պահպանության և մատենագիտության բաժնին, շատ ավելի մոտիկից հնարավորություն ունեցանք հաղորդակից դառնալու նրա անձին ու գործունեությանը:

Մնացականյանը ինչպես Մատենադարանի, այնպես էլ Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի գիտական խորհուրդների անդամ էր: Հաճախ հանդես էր գալիս ուշագրավ և միանգամայն արժեքավոր պեկուցումներով Մաշտոցյան Մատենադարանի գիտական նստաշրջաններին: Նա հողվածներով, բացի «**Բանբեր Մատենադարանի**»-ից, որի խմբագրական մարմնի անդամ էր, իր աշխատակցությունն էր բերում նաև «**Պատմաբանասիրական հանդես**»ին, «**Տեղեկագիր**» (այսպես «**Լրաբեր**») «**Սովետական Գրականություն**», Մոսկվայի «**Проблемы палеографии и кодикологии в СССР**», Բեյրութի «**Հայագիտական հանդես**»ին և այլ պարբերականներին: Նա աշխատակցել է նաև «**Հայկական Սովետական Հանրագիտարան**»ին:

Բազմաթիվ երիտասարդ ուժեր է նա պատրաստել, ղեկավարել է ավարտաձուտեր և կամ հանդես է եկել իբրև ընդդիմախոս, գրել է Կանադան երկրի առաջաբաններ ու խմբագրել է հայագիտական գրքեր:

Իբրև վաղեմի ծանոթ Վեհափառ Հայրապետի, Աս. Մնացականյանը կապի մեջ էր նաև «**Էջմիածին**» ամսագրի հետ: Նրա բոլոր կարևորագույն մենագրությունների մասին ամսագրի էջերում լույս տեսան գրախոսություններ (1952 ապրիլ, 1955 հունիս, 1966 հուլիս): 1969 թ. Սրբալույս Մեռնի օրհնության և Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակի օրերին Վեհարանի դահլիճում կազմակերպված Հայ մշակույթի տունին նվիրված հանդիսությանը Ասատուր Մնացականյանը հրավիրվեց պեկուցելու **Հայ մշակույթի մասին**, որի ամփոփումը լույս տեսավ ամսագրում («**Էջմիածին**», 1969, հոկտ.-նոյեմբեր): Աս. Մնացականյանը իր աշխատակցությունը բերեց նաև «**Էջմիածին**» ամսագրին: 1967 թ. մայիսի համարում լույս տեսավ իր գերության շրջանում Ռումինիայի Կապաֆաթի և Տիմիշոարայի ռազմագերիների ճամբարներում նրա գրած «**Ջրույց վանականի և հրաջքի մասին**» բանաստեղծությունը, որը պահված է եղել նրա բանաստեղծությունների ժողովածոում Տ. Վազգեն վրդ. Պալճյանի մոտ: 1968 թ. հունիսին նույն ամսագրում հրատարակվեց Աս. Մնացականյանի «**Սանահին և Հաղբառ մենաստանների մշակութային կյանքի պատմությունից**» հոդվածը, այդ վանքերի հիմնադրման 1000-ամյակի առթիվ, իսկ 1972 թ. սեպտ.ին դարձյալ «**Էջմիածին**» հանդեսում լույս տեսավ «**Ռ՝վ է Սկևռայի 1293 թ. մասնատուսի պատմիրատու Կոստանդին Եպիսկոպոսը**» ուսումնասիրությունը և այլն:

Աս. Մնացականյանը պարզևստովել էր «Պատվո նշան» շքանշանով և մեդալներով ու Հայկ. ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգրով: Նրա դագաղը դրված էր Հայաստանի արվեստի աշխատողների տանը, վերջին հրաժեշտը եկել էին մատուցելու մայրաքաղաքի մտավորականությունը, գրողներ, գիտնականներ, արվեստագետներ ու խոուններամ բազմություն: Հուղարկավորությունը կատարվեց հունիսի 29-ին: Նրա աճյունը այժմ հանգչում է իր սիրելի ու խաղաղիկ ծննդավայրում՝ Ոսկեվապում:

Սեպտեմբերի 4-ին, կիրակի օրը, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետը քարուպեց Աս. Մնացականյանի կյանքի անցած ուղու մասին՝ նշելով.

«Իր աչքերը փակեց հայտնի գիտնական և բոլորի կողմից գնահատված ու սիրված Ասատուր Մնացականյանը: Բոլորս ճանաչել ենք նրան առավել կամ նվազ չափով, ծանոթացել ենք նրա գործերին, կոթողական գործեր, որոնք մնայուն արժեք են ներկայացնում այսօր և վաղը մեր մատենագիտության մեջ: Ցավով լսեցինք նրա մահը, որովհետև տակավին նա երկար տարիներ կարող էր ապրել և ստեղծագործել: Նա սիրում էր մեր երկիրը, մեր մայրենի հողը, սիրում էր մեր ժողովրդին, սիրում էր մեր անցյալը, մեր արվեստը: Եվ այդ սիրով բոցավառ, այդ սիրով խանդավառ՝ նոր արժեքներ ստեղծեց նա և հարստացրեց հայ գիտության գանձատունը:

Ես ճանաչել եմ նրան վաղուց, տակավին Ռուսինիայից, երբ նա ծառայում էր սովետական բանակում՝ հայրենիքի պաշտպանության դիրքերում: Եվ այդ օրերից, ուղիղ բռնասուն տարի առաջ, 1943 թվին, զգացինք մենք նրա մեջ այն արարչական սերը, որով բոցավառված էր նա: Վերադառնալով հայրենիք՝ նա բացառիկ արժեք ներկայացնող գործեր կատարեց մեր հայրենիքի և ժողովրդի համար»:

Հավարտ Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ հոգեհանգստյան պաշտոն: Արարողությունից հետո Վեհափառը բարեհաճեց Վեհարանում ընդունել հանգուցյալի ընտանիքի անդամներին և գործընկերներին՝ Մաշտոցյան Մատենադարանի և Հայկ. ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Ս. Աբեղյանի անվան Գրականության, Պատմության և Արևելագիտության ինստիտուտների գիտական աշխատակիցներին և հայտնեց իր ցավակցությունները: Այս պատմեց իր սրտահոպ հուշերը՝ կապված

հանգուցյալի հետ իր ունեցած վաղեմի ծանոթությունից: Այնուհետև Նորին Վեհափառության կողմից շուրջ 40 տարիներ շարունակ պահված Մնացականյանի ձեռագիր բանաստեղծությունների հատորից կատարվեցին արտասանություններ:

Աս. Մնացականյանը իր բազմակողմանի ուսումնասիրություններով երեք տարբեր գիտահետազոտական հիմնարկությունների գործ կատարեց, որոնցից ամեն մեկն իսկ առանձին վերցրած կարող էր փառքի արժանացնել նրա հեղինակին: Այսպիսով, Աս. Մնացականյանը հայ միջնադարյան բանաստեղծության անփոխարինելի հետազոտողը եղավ, հայ պարզարվեստագիտության ուսումնասիրության հիմնադիրը և վերջապես հայ պատմագիտության ակունքելի մնացած հարցերի լուսաբանողը: Այս բոլորի վրա էթե գումարվի նաև հայ ձեռագրագիտության մեծ վարպետ լինելու իր հանգամանքը, ապա պարզ կլինի նրա հոգևատանջ աշխատանքների տարողությունն ու չափը:

Աս. Մնացականյանը շերտ հայրենասեր էր: Իր այդ բացառիկ զգացումից մղված էր, որ նա կատարում էր նորանոր սխրանքներ հայագիտության ասպարեզում, շատ անգամ արհամարհելով իր հանգիստն ու առողջական վիճակը: Նա ուղղամիտ էր և սկզբունքային, անաչառ էր ու ավնիվ, գիտության մեջ ճշմարտության նկատմամբ անսխալ: Անփոխարինելի խորհրդատու էր նա թե ավագի և թե՛ սկսնակի համար, իր ամեն մի աշխատանքի նկատմամբ խստապահանջ էր և բարեխղճության տիպար, իսկ ոգեշնչող ու քաջալերող՝ ուրիշների համար: Նա անմիջական էր, գերզգայուն սիրտ ուներ, խորաթափանց միտք և ուժեղ դիտողականության տեր գիտնական էր: Նա կրում էր իսկական բանաստեղծի սիրտ և արդեն նրան գիտական նոր խիզախումների թելադրողը նրա բանաստեղծական շունչն էր, իսկ իր արտահայտվելու եղանակը միջոտ գիտական էր:

Մեծ է և անփոխարինելի Ասատուր Մնացականյանի կորուստը: Մաղթենք, որ հայագիտության ինչպես այս, այնպես էլ մյուս անհետացող դեմքերին գան փոխարինելու երիտասարդ, տաղանդավոր նոր ուժեր:

Հավերժ փառք հայ ձեռագրագիտության անմահ երախտավորին՝ Աս. Մնացականյանին:

ՍՐԻՐԵՆ ՔՈՒԱՆՋՅԱՆ